ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

18 հոկտեմբերի 2016 թվականի **թիվ 110** քաղ. Մոսկվա

Մաքսատուրքերի, հարկերի վճարումից լրիվ պայմանական ազատմամբ ժամանակավորապես ներմուծվող ապրանքների ցանկում փոփոխություն կատարելու մասին

Մաքսային միության մաքսային օրենսգրքի 282-րդ հոդվածի 1-ին կետին եւ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի թիվ 1 հավելվածի 5-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը **որոշեց**.

1. Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի թիվ 331 որոշմամբ հաստատված՝ Մաքսատուրքերի, հարկերի վճարումից լրիվ պայմանական ազատմամբ ժամանակավորապես ներմուծվող ապրանքների ցանկը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 37-րդ կետով՝

«37. Օտարերկրյա անձանց սեփականություն հանդիսացող, Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների անձանց կողմից թայմ-չարտերի

եւ բերբոուտ-չարտերի պայմանագրով ոչ առեւտրային նպատակներով (հանգստի, զբոսաշրջության եւ մշակութային միջոցառումների համար) ջրային օբյեկտների (ծովային եւ (կամ) ներքին ջրային) վրա օգտագործելու պայմանով վարձված, ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8903 ծածկագրով դասակարգվող առագաստանավեր՝ օժանդակ շարժիչով կամ առանց դրա, մոտորանավակներ կամ կատերներ՝ յուրաքանչյուրը՝ 7,5 մ-ից ավելի երկարությամբ եւ 100 կգ-ից ավելի զանգվածով, սարքավորված տախտակամածով եւ նավախցիկով (նավախցիկներով)։»։

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո։

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	Բելառուսի Հանրապետությունից՝	Ղազախստանի Հանրապետությունից՝	Ղրղզստանի Հանրապետությունից՝	Ռուսաստանի Դաշնությունից՝
Վ. Գաբրիելյան	Վ. Մատյուշեւսկի	Ա. Մամին	Օ. Պանկրատով	Ի. Շուվալով